ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/36

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Բողոք բերող՝ «Շին նախագիծ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11» և «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13» ծածկագրերով բաց մրցույթ, խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Շին նախագիծ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Մասնակից) կողմից 03.03.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Մասնակիցը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Չեղյալ հայտարարել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի շրջանակներում սույն թվականի փետրվարի 19-ին տեղեկագրում հրապարակված գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության որոշումը:

2. Չեղյալ հայտարարել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝ «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի շրջանակներում սույն թվականի փետրվարի 19-ին տեղեկագրում հրապարակված գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության որոշումը:

3. Չեղյալ հայտարարել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի շրջանակներում սույն թվականի փետրվարի 19-ին տեղեկագրում հրապարակված գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության որոշումը:

4. Չեղյալ հայտարարել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝ «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի շրջանակներում սույն թվականի փետրվարի 26-ին տեղեկագրում հրապարակված գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության որոշումը:

5. Չեղյալ հայտարարել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝ «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի շրջանակներում սույն թվականի փետրվարի 26-ին տեղեկագրում հրապարակված գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության որոշումը:

6. Պարտավորեցնել «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11» և «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Շին նախագիծ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և ճանաչել ընտրված մասնակից:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 27.02.2020թ.-ին:

02.03.2020թ.-ին այն վերադարձվել է՝ բողոքում առկա խախտումները վերացնելու համար:

Բողոքը կրկին՝ վերադարձնելուց հետո Բողոքներ քննող անձին է մակագրվել 03.03.2020թ.-ին:

04.03.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/36 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

09.03.2020թ.-ին, 24.03.2020թ.-ին և 02.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 24.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.04.2020թ.-ին:

2. «Շին նախագիծ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Շին նախագիծ» ՍՊԸ-ն 03.03.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝

«Վ. Արտաշատ համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման», «Բերդիկ համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման», «Դվին համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» աշխատանքերի նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին հայտ են ներկայացրել՝ Ջրտուք ՍՊԸ, ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ԱՊԸ, ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ- ները:

Հայտերի բացման և գնահատման փուլում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գրությամբ առաջարկել է Շին նախագիծ ՍՊԸ-ին հայտով ներկայացրած հավելված թիվ 1.1, 1.2 շտկման մասին:

Որից հետո Շին նախագիծ ՍՊԸ-ն մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել է անհամապատասխանությունը:

Պատվիրատուն 13.02.2020 թվականին տեղեկագրում հրապարակում է հայտերի բացման և գնահատման մասին գնահատող հանձնաժողովի արձանագրություն թիվ 2-ը՝ ըստ որի Շին նախագիծ ՍՊԸ-ն շտկել է բացակայող փաստաթղթերը և գնահատվել է ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3 ծածկագրրով բաց մրցույթի թիվ 1,2,3 չափաբաժիններով հրավերի պահանջներին համապատասխանող և առավել միավորներ ստացած մասնակից:

Պատվիրատուն 13,02,2020 թվականին տեղեկագրում հրապարակում է պայմանագիր կնքելու որոշում և թիվ 1,2,3 չափանաժիններով ընտրված մասնակից է

ճանաչում Շին Նախագիծ ՍՊԸ-ին, անգործության ժամկետ սահմանելով 10 օրացուցային օր:

Այնուհետև պատվիրատուն 19,02,2020 թվականին տեղեկագրում հրապարակում է գնահատող հանձնաժողովի վերագնահատման արտահերթ նիստի արձանագրություն թիվ 3 ը, որով գնահատող հանձնաժողովի 3.1 որոշմամբ մերժվել է Շին նախագծի ՍՊԸ- ի հայտը և մերժման հիմնավորում է ներկայացվել հրավերով պահանջվող թիվ 1.1, 1.2 հավելվածները ենթակա չեն շտկման կամ լրացման

Այնուհետև պատվիրատուն 19,02,2020 թվականին տեղեկագրում հրապարակում է ՋՆԾ-ԽԲՄ-ԾՅԲ- 2019/1/2/3 ծածկագրով բաց մրցույթի թիվ 2-րդ չափաբաժինը չկայացած համարելու մասին հայտարարությունը:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝

Վ. Դվին համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման». «Մխչյան համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» աշխատանքերի նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին հայտ են ներկայացրել՝ Ջրտուք ՍՊԸ, ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ, ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ- ները:

Հայտերի բացման և գնահատման փուլում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գրությամբ առաջարկել է Շին նախագիծ ՍՊԸ-ին հայտով ներկայացրած հավելված թիվ 1.1, 1.2 շտկման մասին:

Որից հետո Շին նախագիծ ՍՊԸ-ն մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել է անհամապատասխանությունը:

Պատվիրատուն 13.02.2020 թվականին տեղեկագրում հրապարակում է հայտերի բացման և գնահատման մասին գնահատող հանձնաժողովի արձանագրություն թիվ 2-ը՝ ըստ որի Շին նախագիծ ՍՊԸ-ն շտկել է բացակայող փաստաթղթերը և գնահատվել է ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5 ծածկագրրով բաց մրցույթի թիվ 1.2 չափաբաժիններով հրավերի պահանջներին համապատասխանող և առավել միավորներ ստացած մասնակից:

Պատվիրատուն 13,02,2020 թվականին տեղեկագրում հրապարակում է պայմանագիր կնքելու որոշում և թիվ 1, 2 չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչում Շին նախագիծ ՍՊԸ-ին, անգործության ժամկետ սահմանելով 10 օրացուցային օր:

Այնուհետև պատվիրատուն 19,02,2020 թվականին տեղեկագրում հրապարակում է գնահատող հանձնաժողովի վերագնահատման արտահերթ նիստի արձանագրություն թիվ

3-ը, որով գնահատող հանձնաժողովի 3.1 որոշմամբ մերժվել է Շին նախագծի ՍՊԸ- ի հայտը և մերժման հիմնավորում է ներկայացվել հրավերով պահանջվող թիվ 1.1. 1.2 հավելվածները ենթակա չեն շտկման կամ լրացման:

Այնուհետև պատվիրատուն 19,02,2020 թվականին տեղեկագրում հրապարակում է ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5 ծածկագրով բաց մրցույթի թիվ 1-րդ չափաբաժինը չկայացած համարելու մասին հայտարարությունը:

3. Նոր Կյանք համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին հայտ են ներկայացրել՝ Ջրտուք ՍՊԸ, ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ, ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ- ները:

Հայտերի բացման և գնահատման փուլում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գրությամբ առաջարկել է Շին նախագիծ ՍՊԸ-ին հայտով ներկայացրած հավելված թիվ 1.1, 1.2 շտկման մասին:

Որից հետո Շին նախագիծ ՍՊԸ-ն մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել է անհամապատասխանությունը:

Պատվիրատուն 13.02.2020 թվականին տեղեկագրում հրապարակում է հայտերի բացման և գնահատման մասին գնահատող հանձնաժողովի արձանագրություն թիվ 2-ը՝ ըստ որի Շին նախագիծ ՍՊԸ-ն շտկել է բացակայող փաստաթղթերը և գնահատվել է ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8 ծածկագրրով բաց մրցույթի թիվ 1 չափաբաժնով հրավերի պահանջներին համապատասխանող և առավել միավորներ ստացած մասնակից:

Պատվիրատուն 13,02.2020 թվականին տեղեկագրում հրապարակում է պայմանագիր կնքելու որոշում և թիվ 1 չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչում Շին նախագիծ ՍՊԸ-ին, անգործության ժամկետ սահմանելով 10 օրացուցային օր:

Այնուհետև պատվիրատուն 19,02,2020 թվականին տեղեկագրում հրապարակում է գնահատող հանձնաժողովի վերագնահատման արտահերթ նիստի արձանագրություն թիվ 3-ը, որով գնահատող հանձնաժողովի 3.1 որոշմամբ մերժվել է Շին նախագծի ՍՊԸ- ի հայտը և մերժման հիմնավորում է ներկայացվել հրավերով պահանջվող թիվ 1.1, 1.2 հավելվածները ենթակա չեն շտկման կամ լրացման

4. Շինարարական աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին հայտ են ներկայացրել՝ Ջրտուք ՍՊԸ, ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ- ները:

Պատվիրատուն 26.02.2020 թվականին տեղեկագրում հրապարակում է հայտերի բացման և գնահատման մասին գնահատող հանձնաժողովի արձանագրություն թիվ 2-ը՝ որով գնահատող հանձնաժողովի 8.1 որոշմամբ մերժվել է Շին նախագծի ՍՊԸ- ի հայտը առանց որևէ հիմնավորման:

5. Շինարարական աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին հայտ են ներկայացրել՝ Հազարաշեն ՍՊԸ, ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ- ները:

Պատվիրատուն 26.02.2020 թվականին տեղեկագրում հրապարակում է հայտերի բացման և գնահատման մասին գնահատող հանձնաժողովի արձանագրություն թիվ 2-ը՝ որով գնահատող հանձնաժողովի 8.1 որոշմամբ մերժվել է Շին նախագծի ՍՊԸ- ի հայտը՝ հրավերով սահմանված թիվ 1.1, 1.2 հավելվածների բացակայության պատճառով և նույն արձնագրության 8.2 որոշմամբ ընթացակարգը համարվել է չկայացած: Չկայացած համարելու մասին որոշումը տեղեկագրում հրապարակվել է 26.02.2020 թվականին:

Այսպիսով պատվիրատուն նշված ընթացակարգերի մասով Շին նախագծի ՍՊԸ-ին մերժել է հրավորվ պահանջվող թիվ 1.1, 1.2 հավելվածների համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու, հավասար իրավունք:

Գտնում ենք, որ առնվազն այս մասով նույնպես գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել խախտումներ:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները,

ա. արգելելու կատարել որոշակի գործողությունն եր և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝ ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11» և «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13» ծածկագրերով բաց մրցույթի հրավերի 1 ին մասի 8,2 կետով՝ Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ 40-րդ կետի 4-րդ ենթակետով հստակ սահմանում է հայտերի մերժման հիմքերը:

Այսպիսով գտնում ենք Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝ ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11» և «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13» ծածկագրերով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը անհիմն է մերժել Շին նախագծի ՍՊԸ-ի հայտը:»:

Ներկայացված լրացմամբ, Ընկերությունը հայտնել է նաև հետևյալը,

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվական նոյեմբերի 16-ի N 1454-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1422-Ն որոշմամբ աշխատանքային ռեսուրսներ, ֆինանսական միջոցներ, տեխնիկական միջոցներ որակավորման չափորոշիչները փոխարինվեցին որակավոման ապահովումներով:

Բողոքարկվող մրցույթների ընթացակարգերն իրականացվել են խորհրդատվական ծառայություններ ձեռքբերման բաց մրցույթի ընթացակարգով՝ համաձայն Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ընտրված խորհրդատուն կարող է որոշվել նաև այս այն խորհրդատուին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և աշխատանքային փորձին, աշխատակազմին. ծառայության

մատուցման առաջարկվող կարգին կամ հրավերով սահմանված ոչ գնային այլ պայմանին (պայմաններին) հրավերով սահմանված կարգով տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է, ըստ էության ենթադրվում է որ պատվիրատուն կարող է այլ որակավորման չափորոշիչներ սահմանել հրավերով՝ որը կիրառել է պատվիրատուն:

Սակայն Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը չի ենթադրում հաշվի չառնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը / մեջբերում նշված կարգի 41-րդ կետից Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էկեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները/: Քանի որ հրավերը անհատական իրավական ակտ է ապա այն պետք է չհակասի ավելի բարձր իրավական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին:

Համաձայն Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածով նորմատիվ իրավական ակտն մեկնաբանվում է՝ «Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ՝ Պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ:

Վերոգրյալի լույսի ներքո հետևում է, որ պատվիրատուի (տվյալ դեպքում հանդիսանում է պետական մարմին) գործողությունները բացառապես պետք է բխեն օրենքից և ենթադրություններ կամ անձնական կարծիք հայտնելու իրավասությամբ պատվիրատուն օժտված չէ:

Պատվիրատուի այն դիրքորոշմանը թե շտկման հնարավորությամբ ստեղծվում են ոչ հավասար, ոչ թափանցիկ, խտրական պայմաններ և առավելություն այլ մասնակիցների նկատմամբ՝ դրանք ուղղակի պատվիրատուի կարծիքն են և իրավական առումով ոչ հիմնավորված չեն».

Ելնելով վերոգրյալից Շին նախագիծ ՍՊ ընկերությունը հայտարարում է եթե անգամ որակավորման փաստաթղթերը ներկայացվեին ի սկզբանե ապա ընկերությունը կներկայացներ այն որակավորման փաստաթղթերը որը ներկայացրել է շտկված տարբերակներում:»:

Ելնելով վերոգրյալից, «Շին նախագիծ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Չեղյալ հայտարարել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի շրջանակներում սույն թվականի փետրվարի 19-ին տեղեկագրում հրապարակված գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության որոշումը:

2. Չեղյալ հայտարարել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝ «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի շրջանակներում սույն թվականի փետրվարի 19-ին տեղեկագրում հրապարակված գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության որոշումը:

3. Չեղյալ հայտարարել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի շրջանակներում սույն թվականի փետրվարի 19-ին տեղեկագրում հրապարակված գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության որոշումը:

4. Չեղյալ հայտարարել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝ «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11» ծածկագրով բաց մրցույթի

ընթացակարգի շրջանակներում սույն թվականի փետրվարի 26-ին տեղեկագրում հրապարակված գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության որոշումը:

5. Չեղյալ հայտարարել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝ «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի շրջանակներում սույն թվականի փետրվարի 26-ին տեղեկագրում հրապարակված գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության որոշումը:

6. Պարտավորեցնել «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11» և «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13» ծածկագրերով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Շին նախագիծ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և ճանաչել ընտրված մասնակից:

3. <u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.03.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/3280-2020 գրությամբ դիմել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից 03.03.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 09.03.2020թ.-ին հրավիրված նիստին:

Պատվիրատուն ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան վերոնշյալ գրության տեղեկացնում ենք Ձեզ, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3, ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5, ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8, ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11, ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13, ծածկագրերով մրցույթները կազմակերպվել են խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման բաց մրցույթի ընթացակարգով՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 44-րդ հոդվածի 2-րդ մասի, ըստ որի՝

«2. Ընտրված խորհրդատուն կարող է որոշվել նաև այն խորհրդատուին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և աշխատանքային փորձին, աշխատակազմին,

ծառայության մատուցման առաջարկվող կարգին կամ հրավերով սահմանված ոչ գնային այլ պայմանին (պայմաններին) հրավերով սահմանված կարգով տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է:»

Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգերի հրավերում սահմանվել է հետևյալ գնահատման մեթոդաբանությունը՝

- *«Աշխատանքային փորձ» որակավորման չափանիշ՝ «Աշխատանքային փորձ» որակավորման չափանիշի կշիռը ընդհանուր գնահատականում կազմում է 30 տոկոս՝ Հավելված 1.1:*
- *«Աշխատակազմի որակավորում» չափանիշ՝ «Աշխատակազմի որակավորում» որակավորման չափանիշի կշիռը ընդհանուր գնահատականում կազմում է 30 տոկոս՝ Հավելված 1.2:*
- *«Գնային առաջարկ» չափանիշ՝ այս չափանիշի կշիռը ընդհանուր գնահատականում կազմում է 40 տոկոս:*

ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3, ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5, ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8 ծածկագրերով մրցույթներում «Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ի և Հավելված 1.2-ի փոխարեն ներկայացվել է Հավելված 1-ը՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում հայտարարություն:

Հայտերի գնահատման ընթացքում «Շին նախագիծ» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում ներկայացնելու բացակայող Հավելվածները: Սահմանված ժամկետում «Շին նախագիծ» ՍՊԸ-ն ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

2020 թվականի փետրվարի 12-ի թիվ ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3, ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5, ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8 ծածկագրերով մրցույթների հանձնաժողովի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրությունով ընտրված մասնակից է հայտարարվել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ և առավելագույն միավոր ստացած մասնակից՝ «Շին նախագիծ» ՍՊԸ-ն:

2020 թվականի փետրվարի 18-ին հանձնաժողովի քարտուղարի կողմից հրավիրվել է թիվ ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3, ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5, ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8 ծածկագրերով մրցույթների գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ:

Համաձայն խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար Հրավերով ներկայացված պահանջների, սահմանված կշիռների և մասնակիցներին տրվող միավորների հաշվարկման մեթոդաբանության առանձնահատկությունների՝ «Աշխատանքային փորձ» և «Աշխատակազմի որակավորում» չափանիշները ուղիղ կերպով

ազդում են գնահատման և ընտրված մասնակցի ընտրության վրա: Ուստի, նշված յուրաքանչյուր չափանիշի մասով, ինչպես նշված է հրավերի 1-ին մասի 2.2.2 և 2.2.3 կետերի «բ» և «գ» ենթակետերում՝

«Հրավերի նվազագույն պահանջները չբավարարող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

Հիմք ընդունելով գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով մրցույթների կազմակերպումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց գնահատել անբավարար և մերժել «Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11 և ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13 ծածկագրերով մրցույթների դեպքում «Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից նմանատիպ ձևով Հավելված 1.1-ի և Հավելված 1.2-ի փոխարեն ներկայացվել է Հավելված 1-ը, ինչի հետևանքով հայտը նույնպես գնահատվել է անբավարար և մերժվել: Ընդ որում, ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13 ծածկագրով ընթացակարգի դեպքում, որպես շտկում ներկայացվել են ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11 ծածկագրով հավելվածներ, ինչը նշանակում է, որ «Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից շտկում առհասարակ չի իրականացվել:

Ի լրումն վերոգրյալի՝ Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն փաստին, որ «Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից մինչ օրս հրապարակվող բոլոր մրցույթներում հայտերի ներկայացման ժամանակ, մեր կարծիքով, միտումնավոր ձևով չի հրապարակվում կազմակերպության կողմից իրականացված պայմանագրերի ցանկը և աշխատակիցների որակավորման տվյալները՝ Հավելված 1.1-ը և Հավելված 1.2-ը, կամ ներկայացված Հավելված 1.1-ում և Հավելված 1.2-ում լրացված են ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի անվանումը, սակայն ջնջված են հրավերով հրապարակված տեղեկատվություն պարունակող աղյուսակները և տեքստային հատվածները: Մինչդեռ, այլ մասնակիցների կողմից վերոգրյալ տեղեկատվությունը հրապարակվում է ամբողջությամբ: Հաշվի առնելով խորհրդատուի ընտրության մեթոդի առանձնահատկությունները՝ կարծում ենք, որ «Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ստեղծվում են ոչ հավասար, ոչ թափանցիկ, խտրական պայմաններ և առավելություն այլ մասնակիցների նկատմամբ:

Ուստի, գտնում ենք, որ վերոգրյալ բոլոր մրցույթներում ներկայացված հայտերը, մեր կարծիքով, ենթակա են մերժման:»:

Ներկայացված լրացմամբ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է նաև հետևյալը.

«Ի լրումն թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/36 ծածկագրով բողոքի նիստի արդյունքների՝ Ձեզ ենք ուղարկում «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11» և «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13» ծածկագրերով մրցույթներին «Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնման հայտերը:

Հաշվի առնելով այն, որ վերոնշյալ ծածկագրերով հրավերների 1-ին մասի 2.2.2 և 2.2.3 կետերում հստակ ներկայացված են «Աշխատանքային փորձ» և «Աշխատակազմի որակավորում» չափանիշների գնահատման մեթոդաբանությունը, բանաձևերը, ինչպես նաև նշում այն մասին, որ «Հրավերի նվազագույն պահանջները չբավարարող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են», գտնում ենք, որ Հավելված 1.1-ով և Հավելված 1.2-ով ներկայացված տեղեկատվությունը պետք է տրմադրվի հայտերի ներկայացման փուլում և դրանցում պարունակվող տեղեկատվությունը չպետք է շտկվի: Ընդ որում, ցանկացած հայտատու ունի տվյալ մրցույթի հայտերը տեսնելու, բանաձևերով հաշվարկելու և արդյունքները գնահատելու հնարավորություն: Ուստի, շտկման հնարավորություն ունենալու դեպքում, Հավելված 1.1-ով և Հավելված 1.2-ով տեղեկատվություն չներկայացրած մասնակիցը կարող է ընտրված մասնակից հայտատրարվելու համար անհրաժեշտ քանակի պայմանագրեր և համապատասխան աշխատակազմ ներկայացնել, ազդել մրցույթների թափանցիկության վրա՝ ստեղծելով ոչ հավասար պայմաններ մասնակիցների համար: Մասնավորապես, հնարավոր է ներկայացնել տվյալ ընկերությունում չաշխատող և առավել շատ տարիների փորձ ունեցող մասնագետների ցուցակ, ինչպես նաև առավել մեծ քանակությամբ պայմանագրեր: Ընդ որում, պայմանագրերի իսկությունը միշտ չէ, որ հնարավոր է ստուգել, քանի որ նման դեպքերում կարող են ներկայացվել պայմանագրեր, որոք կնքված են երկու մասնավոր ընկերությունների միջև, չունեն հաշիվ- ապրանքագրեր և իսկությունը հիմնավորող միակ փաստաթուղթը տվյալ պայմանագիրը կնքած կողմի հավաստումն է:

Վերոնշյալ ծածկագրերով հրավերներում նշված է նաև, որ՝

«8.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:»

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքին, որ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցույթում գնային առաջարկի մերժումը չի բացառում հրավերի այլ պահանջներին չբավարարող հայտերի մերժումը: Իսկ վերոնշյալ կետում նշված մերժման հիմքերը վերաբերում են միայն գնային առաջարկին, մասնավորապես՝ հրավերի 8.9 կետով սահմանված բացառություններին:

Տեղեկացնում եմ, որ «Շին նախագիծ» ՍՊԸ-ն մինչ օրս մասնակցել է թվով 23 ծրագրերի նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցույթներին և դրանցից ոչ մեկում հայտերի ներկայացման փուլում չի ներկայացրել պայմանագրերի և աշխատակազմի մասին որևէ տեղեկատվություն:

Կից Ձեզ ենք ներկայացնում նաև շտկման պահանջի հիման վրա «Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերի և աշխատակազմի վերաբերյալ տեղեկատվությունը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11» և «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13» ծածկագրերով բաց մրցույթի ընթացակարգեր (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Հայտարարված ընթացակարգերը կազմակերպվել են խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման բաց մրցույթի ընթացակարգով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն:

Պատվիրատուի կողմից խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11» և «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13» ծածկագրերով հայտարարված ընթացակարգերի հրավերում (այսուհետ՝ Հրավեր) սահմանվել է հետևյալ գնահատման մեթոդաբանությունը՝

- «Աշխատանքային փորձ» որակավորման չափանիշ՝ «Աշխատանքային փորձ» որակավորման չափանիշի կշիռը ընդհանուր գնահատականում կազմում է 30 տոկոս՝ Հավելված 1.1:
- «Աշխատակազմի որակավորում» չափանիշ՝ «Աշխատակազմի որակավորում» որակավորման չափանիշի կշիռը ընդհանուր գնահատականում կազմում է 30 տոկոս՝ Հավելված 1.2:
- «Գնային առաջարկ» չափանիշ՝ այս չափանիշի կշիռը ընդհանուր գնահատականում կազմում է 40 տոկոս:

«Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ի և Հավելված 1.2-ի փոխարեն ներկայացվել է Հավելված 1-ը՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում հայտարարություն:

Մասնակցի կողմից Հավելված 1.1-ն և Հավելված 1.2-ը չի ներկայացվել նաև այլ՝ «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7», «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12», «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16» և «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/20» ծածկագրերով ներկայացված դիմում հայտարարությանը:

Հայտերի գնահատման ընթացքում «Շին նախագիծ» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում ներկայացնելու բացակայող Հավելվածները: Սահմանված ժամկետում «Շին նախագիծ» ՍՊԸ-ն ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

2020 թվականի փետրվարի 12-ի թիվ «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5» և «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8» ծածկագրերով մրցույթների հանձնաժողովի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրությունով ընտրված մասնակից է հայտարարվել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ և առավելագույն միավոր ստացած մասնակից՝ «Շին նախագիծ» ՍՊԸ-ն:

2020 թվականի փետրվարի 18-ին հանձնաժողովի քարտուղարի կողմից հրավիրվել է թիվ «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5» և «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8» ծածկագրերով մրցույթների գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով մրցույթների կազմակերպումը, որոշել է «Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:

«ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13» ծածկագրով ընթացակարգի դեպքում, որպես շտկում ներկայացվել են մեկ այլ՝ թիվ «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11» ծածկագրով մրցույթին վերաբերող հավելվածներ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից 03.03.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված

լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11» և «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13» ծածկագրերով բաց մրցույթի ընթացակարգերին մասնակցելու համար հայտ ներկայացրած «Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ի և Հավելված 1.2-ի փոխարեն ներկայացվել է Հավելված 1-ը՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում հայտարարություն:

Հայտարարված ընթացակարգերի հրավերում սահմանվել է հետևյալ գնահատման մեթոդաբանությունը՝

- «Աշխատանքային փորձ» որակավորման չափանիշ՝ «Աշխատանքային փորձ» որակավորման չափանիշի կշիռը ընդհանուր գնահատականում կազմում է 30 տոկոս՝ Հավելված 1.1:
- «Աշխատակազմի որակավորում» չափանիշ՝ «Աշխատակազմի որակավորում» որակավորման չափանիշի կշիռը ընդհանուր գնահատականում կազմում է 30 տոկոս՝ Հավելված 1.2:
- «Գնային առաջարկ» չափանիշ՝ այս չափանիշի կշիռը ընդհանուր գնահատականում կազմում է 40 տոկոս:

«Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ի և Հավելված 1.2-ի փոխարեն ներկայացվել է Հավելված 1-ը՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում հայտարարություն:

Մասնակցի կողմից Հավելված 1.1-ն և Հավելված 1.2-ը չի ներկայացվել նաև այլ՝ «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7», «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12», «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16» և «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/20» ծածկագրերով ներկայացված դիմում հայտարարությանը:

Հայտերի գնահատման ընթացքում «Շին նախագիծ» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում ներկայացնելու բացակայող Հավելվածները: Սահմանված ժամկետում «Շին նախագիծ» ՍՊԸ-ն ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

2020 թվականի փետրվարի 12-ի թիվ «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8» ծածկագրերով մրցույթների հանձնաժողովի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրությունով ընտրված մասնակից է հայտարարվել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ և առավելագույն միավոր ստացած մասնակից՝ «Շին նախագիծ» ՍՊԸ-ն:

2020 թվականի փետրվարի 18-ին հանձնաժողովի քարտուղարի կողմից հրավիրվել է թիվ «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/1/2/3», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/4/5», «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/8» ծածկագրերով մրցույթների գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով մրցույթների կազմակերպումը, որոշել է «Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:

«ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/12/13» ծածկագրով ընթացակարգի դեպքում, որպես շտկում ներկայացվել են մեկ այլ՝ թիվ «ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/9/10/11» ծածկագրով մրցույթին վերաբերով հավելվածներ:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Շին նախագիծ» ՍՊԸ-ն, մրցույթին մասնակցելու դիմում հայտարարությանը կից Հավելված 1.1-ի և Հավելված 1.2-ի փոխարեն ներկայացնելով Հավելված 1-ը, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենք 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքները: Մրցույթին մասնակցելու դիմում հայտարարությանը կից Հավելված 1.1-ի և Հավելված 1.2-ի շտկված տարբերակով ներկայացնելու դեպքում, այլ մասնակցի համեմատությամբ կստեղծվեր անհավասար դրություն և անհավասար մրցակցային պայմաններ, քանի որ հնարավորություն կտար «Շին նախագիծ» ՍՊԸ-ին հաշվի առնել արդեն իսկ բացված հայտերում առկա այլ մասնակիցների՝ «Աշխատանքային փորձ» որակավորման և

«Աշխատակազմի որակավորում» չափանիշների տվյալները, որոնք սույն ընթացակարգով ունեն էական նշանակություն և որոնց գործակիցների հանրագումարի մեծությամբ է որոշվում ընտրված խորհրդատուն:

Ընդ որում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Մասնակցի կողմից նման գործելաոճ է դրսևորվել նաև այլ՝ «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7», «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12», «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16» և «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/20» ծածկագրերով հետագայում՝ 2020թ.-ի հունվարին հայտարարված բաց մրցույթների ժամանակ: Այստեղ Մասնակիցը նույնպես Հավելված 1-ով՝ դիմում հայտարարությամբ չի ներկայացրել Հավելված 1.1-ն և Հավելված 1.2-ը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության երաշխավորումը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք, ելակետային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հարաբերությունների կանոնակարգման համար: Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքն է և շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օբյեկտիվ նախադրյալը: Միաժամանակ ազատ տնտեսական գործունեության իրավունքը բացարձակ չէ. այն ենթակա է սահմանափակման՝ ազատ տնտեսական մրցակցության ապահովման նպատակից ելնելով: Հետևաբար նշված երկու իրավական սկզբունքների՝ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության ներդաշնակ ու հետևողական իրացման պայմաններում է միայն հնարավոր հասնել շուկայական հարաբերությունների վրա խարսխված արդյունավետ տնտեսական համակարգի ձևավորմանն ու կայուն զարգացմանը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ շուկայական տնտեսության պայմաններում մրցակցային միջավայրի կառուցումն այն հիմնական ուղիներից մեկն է, որով պետությունը կարողանում է բարձրացնել հասարակության բարեկեցությունը. տվյալ ոլորտում պետությունը պետք է հետամուտ լինի ինչպես ազատ տնտեսական մրցակցության գոյության համար անհրաժեշտ միջավայրի ստեղծմանը, այնպես էլ տնտեսությանը վնաս հասցնող գործողությունների կանխարգելմանը: *(տե՛ս, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի թիվ ՎԴ/6329/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը)*:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ «Շին նախագիծ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումներն իրավաչափ են և բխում են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքներից, ուստի ներկայացված բողոքն անհիմն է և մերժման ենթակա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից 03.03.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/36 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**